


**«Ուիգմոր կանանց և երեխաների հիվանդանոց»**
Հ. Ներսիսյան 10/7, Երևան 0014,
+374 12345678

**«Ուիգմոր ընտանիքի առողջության կենտրոն»**
Պուշկին 56, Երևան 0002, Հայաստան
+374 12345677

**www.wigmore.am**


# ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐ

## ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ



WIGMORE

## ԻՆՉՈՒ՞ Է ՀԱՐԿԱՎՈՐ ՊԱՏՎԱՍՏԵԼ ԵՐԵԽԱՅԻՆ

Կյանքի առաջին օրերից երեխայի իմունային համակարգը արդեն իսկ կարող է դիմակայել շատ մանրէների, սակայն կան որոշ վտանգավոր և մահացու մանրէներ և վիրուսներ, որոնց դեմ երեխայի օրգանիզմը ունակ չէ ինքնուրույն պայքարել:



Պատվաստումների օգնությամբ իմունային համակարգը ճանաչում է այդ հիվանդությունները և պայքարում դրանց դեմ: Պատվաստումների շնորհիվ աշխարհում տարեկան կանխվում է 2-3 մլն մահ:

## ԱՎԵԼԻ ՃԻՇՏ ՉԷ՞ ՎԱՐԱԿՎԵԼ ԱՅԴ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԵՎ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԲՆԱԿԱՆ ԻՄՈՒՆԻՏԵՏ

Թե՛ հիվանդանալուց և թե՛ պատվաստվելուց հետո զարգանում է պաշտպանիչ իմունիտետ, սակայն բնական վարակներից հետո հաճախ զարգանում են այնպիսի բարդություններ, ինչպիսիք են՝ թոքաբորբ, գլխուղեղի և դրա թաղանթների բորբոքում, սեպսիս, կուրություն, բնածին արատներ, կաթված, ուռուցքներ և անգամ մահ:



Պատվաստվելուց հետո օրգանիզմը ձեռք է բերում պաշտպանիչ իմունիտետ առանց նմանատիպ բարդությունների զարգացման:

## ԱՐԴՅՈ՞Ք ԱՆՎՏԱՆԳ ԵՆ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԸ

Բոլոր պատվաստանյութերը, մինչ արտոնագրումը և կիրառումը, անցնում են արդյունավետությունը և անվտանգությունը ապացուցող նախակլինիկական, այնուհետև 3 լայնածավալ կլինիկական հետազոտություններ, իսկ արտոնագրումից հետո մշտապես վերահսկվում են բազմաթիվ կառույցների կողմից:





Բազմաթիվ հետազոտությունների և ուսումնասիրությունների արդյունքում ապացուցվել է, որ ո՛չ պատվաստանյութերում պարունակվող օժանդակ նյութերը, ո՛չ էլ այլ բաղադրիչները չեն առաջացնում աուտիզմ, դիաբետ, աուտոիմուն հիվանդություններ, չբերություն և այլն:

**ԺԱՄԱՆԱԿԻՆ ՊԱՏՎԱՍՏԵԼՈՎ ՁԵՐ ԵՐԵԽԱՅԻՆ՝ ԴՈՒՔ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԵՔ ՈՉ ՄԻԱՅՆ ՆՐԱՆ, ԱՅԼ ՆԱԵՎ ՁԵԶ ԵՎ ՁԵՐ ՇՐՋԱՊԱՏԸ:**




## ՈՒԻԳՄՈՐ՝ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ, ՈՐ ՍԻՐՏ ՈՒՆԻ...



WIGMORE